



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 17

ք. Ստեփանակերտ

Վ.Վ. Միրզոյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 16 առ 08.05.2014թ. հրամանով՝ ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 04 առ 06.05.2014թ.), ԼՂՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով բաժնի դատախազ, 1-ին դասի խորհրդական Վ.Վ.Միրզոյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ բաժինը, համաձայն ԼՂՀ դատախազության նոր կառուցվածքի, լուծարվել է և ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 15 առ 02.03.2015թ. հրամանով Վ.Վ.Միրզոյանը նշանակվել է ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի ավագ դատախազի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի ավագ դատախազ, 1-ին դասի խորհրդական Վիգեն Վլադիմիրի Միրզոյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղաքապետության դատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան